10-րդ դարի առաջին կեսին, Բագրատունյաց Աբաս թագավորի օրով Սանահնում եկեղեցի կառուցելու մասին տեղեկություններ են հաղորդում 13-րդ դարի պատմագիրներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան վարդապետը։

Այդ երկու մատենագիրներն էլ նշում են, որ Ռոմանոս Ա կայսեր ժամանակ (920—944) Բյուզանդական կայսրության սահմաններում ապրող հայ հոգևորականներին առաջարկել են ընդունել քաղկեդոնական դավանանք և միանալ բյուզանդական եկեղեցուն։ Հայ հոգևորականները չեն համաձայնել դրան, ուստի և հալածանքի ենթարկվելով, փախուստ են տվել և եկել Բագրատունյաց հայ թագավորների երկրի սահմանները և



Նկ. 2. Ամենափրկիչ եկեղեցու ներսում հին կառուցվածքի մնացորդներ։

այնտեղ հիմնել են մի շարք վանքեր, որոնց թվում նաև Սանահնի Աստվածածնի անվան եկեղեցին։

Կիրակոս Գանձակեցին այդ մասին գրում է.

«Սա (Ռոմանոս) հալածեաց զամենայն կրօնաւորս և զքահանայս հայոց, որք էին յաշխարհէն Հոռոմոց, զի ո՛չ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի. և եկեալ յաշխարհս Հայոց յաւուրս Աբասայ՝ որդւոյ Սմբատայ, հաստատեցին վանորայս զԿամրջաձոր և զԿապոյտ Քարն ի գաւառին Արշարունեաց, և զհռչականունն Հոռոմոսին կոչեցեալ վանք, և զԴպրէվանք ի Շիրակ գաւառին. շինեցին և եկեղեցի մի յանուն ամենասուրբ Աստուածածնին ի վանքն՝ որ կոչի Սանահին, ի սահմանս Լոռէ քաղաքին»[1]։

Այս նույն պատմագրից և Վարդանից քաղած տեղեկությունների հիման վրա Սանահընի «Քորուկ» կոչված ձեռագիր գրքի մեջ կա, որ Սանահնի կալվածքների և վանքի հետ կապված դեպքերի վերաբերյալ մի ժողովածու է, գրված տարբեր ժամանակներում, Աստվածածնա եկեղեցու կառուցումը վերագրված է նույն վարդապետներին[2]։

Ինչպես տեսնում ենք, Գանձակեցին Աստվածածնա եկեղեցու կառուցման թվականը

[1] Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1909, էջ 79։
[2] Մատենադարանի ձեռագիր, № 3032, էջ 30 և 135։